

# ՆՈՐ ԳՐԱԿԱՆՈՒԹՒՒՆԸ

## Տ Ի Կ Ի Ն Հ Ր Ա Ջ Ե Ա Յ

Իմ յիշողութիւններս

Ռուսահայ ծանօթ բանաստեղծը Յովհ. Թումանեան շատ լաւ առաջարկութիւն մ'ըրած է դերասանուհի տիկին Հրաչեայի, այն է հրատարակել իր յիշողութիւնները. և ինչ լաւ զուգահեռութիւն. տիկին Հրաչեայն յիաներորդ տարւոյն սեմին վրայ կոխած պահուն՝ ընթերցողները իր հետաքրքրական կեանքին հանդիսատես կ'ընէ:

Տիկին Հրաչեայի յիշողութիւնները 1909ի Անահիտին զեղեցիկ էջերը կազմեցին. հոն տեսանք զիւրքը, կեանքի թատերարեմին վրայ՝ տրամա, զաւէշտն իրար կը փոխանակեն յանձին տիկին Հրաչեայի: Գերասանուհին՝ բնիկ պոլսեցի է, 1859 թուին ծնած և եօթը տարեկան հասակին հօրմէն որբուհի մնացած. և այդ դժբախտութիւնը կ'ըլլայ պատճառ որ նա նետուի տարօրինակ կեանքի մը մէջ և երևան գայ իբրև նշանաւոր դերասանուհի մը:

Տիկին Հրաչեայ ինքզինքը անգոր կը զգայ արտայայտելու գրչով իր զգացումները, իր անցեալի յիշատակները — ինչ որ շատ դիրուժեամբ պիտի ընէր բեմին վրայէն:

Այդ զաղափարը իր համեստութեան կը վերագրենք՝ երբ կարող կը սկսինք հատորիկը և չենք ուզեր զայն ձեռքերնէս ձգել: Իր վիպական կեանքը որքան անկեղծութեամբ ու պարզութեամբ կը պատկերացնէ. և կ'ընդունինք՝ թէ այդ գործը հայ թատրոնի պատմութեան վճիռ ու ստոյգ ազդիւրներէն մին է. և համարձակութիւնը կ'ունենանք իրմէն ուզել իր ժամանակի հայ թատրոնի պատմութիւնը:

## Թ Է Ո Պ Ի Կ

Ամենուն Տարեցոյցը 1910

Օսմանեան Ազատութեան անարատ և բախայրիքն է 1910ի Ամենուն Տարեցոյցը: Թէնդիկ, բռնակալութեան շրջանին իսկ շատ շահեկան և հետաքրքրական ըրած էր արդէն իր Տարեցոյցին նախորդ տարիները:

Ընթերցողները որ կը խօսին գործոյն սկիզբը, ամէնքն ալ իրենց շրթունքին վըրայ կը գերազանցէ նախորդները բացատրութիւնը ունին կամ մտածութիւնը. պիտի չյոգնին ապահովապէս նոյն բացատրութիւնը ընելէ և՛ վերջնոյս համար. և կ'երևայ պ. Թէնդիկ յաւիտենական ընել պիտի տայ այդ բացատրութիւնը տարուէ տարի զայն շողողուն ընելով:

Ամենուն տարեցոյցը՝ հայ կեանքն է իր ամէն փուլերով. ղէմք, ղէպք, գրականութիւն, մամուլ, ընդարձակօրէն սահմանագծուած. և ո՛հ որքան գուրգուրանօք պիտի դիտէ տանկահայ ընթերցողը այն ամէն պատկանելի ղէմքերը որոնց անունն իսկ մտարբեկ կարելի չէր անցեալները. և այդ ամէնքը խմբուած են Բ մասին մէջ Դեպ Ի Անցեալ... ին ներքև:

Լէօնէ մինչև Ահարոնեան, Հ. Ալիշանէն մինչև Գեր. Աստընեան, Քիյառ, բարեբարներ, նշանաւոր եկեղեցականներ, գրագէտներ, հրապարակագիրներ և դերասաններ, որոնք Անցեալին մէջ իրենց գործունէութեան դերը ունեցած են, որոնք անցեալին մէջ արդէն պէտք էին յիշուիլ:

Գ մասը՝ պատկերն է Հայ գրականութեան, կամ անտիպ ծաղկացաղ մը, քերթուածներով, գրական յօդուածներով, նրկարագրականներով, կենսագրականներով համեմուած:

Գրական բաժնին առաջին քերթուածը Չօպանեանէն կը ստորագրուի, նուիրուած

Թովմաս Թերզեանին, յարգելի և դեռ չճանչցուած զեղեցկազէտ բանաստեղծին, որ հոն կ'երևայ երիտասարդութեան և վերջին լուսանկարներով: Ասոր քով է Թերզեանի դաստիարակը Հ. Ալիշան, իր գրական և հայկական հաստիքներու անուններով շրջապատուած, և որ իր Յուշիկներուն ընթերցող Հայկակը դէպ ի Աւարայր կ'ընկերէ: Հ. Ալիշան իր երկու կողմն ունի երկու զինքը պաշտողները իր բանաստեղծական հոգւոյն մէջ խորասուզուող աշակերտները, մէկ կողմը Թերզեանը, միւս կողմը Գ. Վարուժանը՝ Լյուքում քերթուածով, — նոյն միջոցութիւն մէջ սնած ուր սաւառնած է Հ. Ալիշանի ոգին:

Կորակէպեր ունին իրաւաւայ տաղանդաւոր գիպասանը Վ. Փափազեան, Եր. Սրմաքէշխանլեան, Յ. Սեթեան, Մ. Կիւրճեան (Հրանդ): Իսկ բանաստեղծական բաժնին մէջ կ'երևան Սիպիլ, Շուշանիկ Կուրղինեան, Մ. Մալէզեան, Սրբերեան, Սիամանթօ, Վ. Քէրէեան, Լ. Էսահանեան, Բ. Գուլանճեան, Ռ. Սեւակ, Շահան Նաթալի. արձակ կտորներ՝ Չիֆաշ-Սարաֆ, Տիգ. Կամարական և այլն:

Կենսագրական բաժնին մէջ է Մեծ. Հ. Յ. Տաշեան, Ստեփան Փափազեան, Վահան Վրդ. Պարտիզակցի են:

Հոն կը գտնենք Թրքահայ Թերթերը և անոնց խմբագիրները (նկարներով): Ճոխ են նաև զաւելջոյի ու գիտական բաժնիները:

Եւ մարդ երբ կը թղթատէ 1910ի Ամենոս Տարեկոյցը՝ ինքն իրեն կը հարցնէ. — «Արդեօք Թէրթիկ գալ տարուան Տարեկոյցը ինչ գիտերով գերագանցել պիտի տայ ներկայս», և հետաքրքրութեամբ կը սպասէ և օր մ'առաջ կ'ուզէ կրիսել 1911ի սեմին վրայ...

տր: Վարուժանը կեանքի կրցիլ համարած եմ. ան ծնած է սև օրերուն, տեսած է սև արցունքներ, լած է սև ողբեր. ու հետևաւորութիւնը ցաւի երկրէն՝ երբեք չկրցաւ մոռցնել տալ Հայրենիքը, հայ կեանքը:

Ան չեղաւ մէկը այն բանաստեղծներէն՝ որոնք զուարճութեանց սրահներուն մէջ կը գրեն իրենց ցաւոտ երգերը. և արդէն գործնականապէս չցցօց, երբ այն ինչ Համալսարանի շրջանը աւարտեց՝ դէպ ի Հայրենիք, ղէպ ի Թշուառութեան երկիրը թուա՝ գործնականապէս մեղմելու անոր ցաւերը և տալու լոյսը. և Բրքնիքը՝ ուր ծնած է բանաստեղծը՝ մտիկ կ'ընէ՝ վայրկեան մը թոցին՝ որ իր եղեգներուն մէջէն ծնաւ:

Վարուժանը լուսած բանաստեղծ մ'է. նա երեցած է Անահտի, Շիրակի, Բագմալէպի, Ազգակի, Թաղմիկի ևն մէջ, և հայ հասարակութիւնը արդէն վերլուծած է իր ոգին:

Յեղիև սիրար գրը կը հրատարակէ «Արժու ժողովրդական գրավաճառատանց»ը, իր մէջ կը թովանդակէ քաւասունէն ամելի քերթուածներ 250 էջերու մէջ աւսիտփուած, որոնք երեք մասերու կը բաժնուին. Բագիճիև վրայ, կրկեսիև մէջ, Գիտագետակցի:

Ներկայ հաստրս իր մէջ ունի վերոյիշեալ Հանդէսներու մէջ հրատարակուած քերթուածները (1906-1909), և այսպէս դիւրամատչելի կ'ըլլայ Վարուժանի ոգին Հայ ժողովրդին՝ որ նիւթ եղած է հայ բանաստեղծին:

Յեղիև Սիրար հաստրին, նա մանաւանդ ամբողջ Վարուժանին վերլուծում մ'է Չօնը որ հաստրին սկիզբն է

208

ԳՍ.ՆԻԷԼ ՎՍՐՈՒԺՍՆ

Յիղին սիրար

Այս երիտասարդ բանաստեղծը որ հինգ տարուան մէջ արդէն կրցաւ հայ գրականութեան մէջ իր փայլուն էջը գրաւել, հայ ընթերցողներուն կու տայ Յեղիև սիրար:

Եղեգնեայ գրքով երգեցի փառքեր. — Քեզի ընծայ, իմ հայրենիք — Սոսեայ անտառէն էի զայն կրտրեր... — Քեզի ընծայ, հին հայրենիք — Եղեգնեայ գրքով երգեցի ցուրմեր. Ընդ եղեգան փող լոյս ելանէր:

Եղեգնեայ զբրշով երգեցի կարօս.  
 — Չեզի ընծայ, հայ պանդուխտներ —  
 Ան տարաշխարհիկ բոյսի մ'էք ծրդօտ...  
 — Չեզի ընծայ, հէգ պանդուխտներ —  
 Եղեգնեայ զբրշով երգեցի հարսեր.  
 Ընդ եղեգան փող ո՛րք ելանէր:

Եղեգնեայ զբրշով երգեցի արիւն.  
 — Չեզի ընծայ, սուրի զոհեր —  
 Ան ծլած էր մոխրի մէջ իբրեւ կընիւն...  
 — Չեզի ընծայ, կրակի զոհեր —  
 Եղեգնեայ զբրշով երգեցի վէրքեր.  
 Ընդ եղեգան փող սիբոս ելանէր:

Եղեգնեայ զբրշով որք Տունս երգեցի.  
 — Քեզի ընծայ, հայր ալեհեր —  
 Յամբած աղբիւրէն մեր զաջն յօտեցի...  
 — Քեզի ընծայ, մայր կարեվեր —  
 Եղեգնեայ զբրշով օճախս երգեցի.  
 Ընդ եղեգան փող ծո՛ւխ ելանէր:

Ու պայքա՛ր, պայքա՛ր, պայքա՛ր երգեցի.  
 — Չեզի ընծայ, հայ մարտիկներ —  
 Գրիչս եղաւ անթրոց սըրտերու հնոցի...  
 — Չեզի ընծայ, քաջ մարտիկներ —  
 Եղեգնեայ զբրշով վրէժ՝ երգեցի.  
 Ընդ եղեգան փող բո՛ց ելանէր:

\* \*

Մենք ազգ մըն ենք որ շուտով կը մեռ-  
 ցնենք Գեղարուեստի ծնունդները կամ բա-  
 րոյսպէս կամ նիւթապէս. կը գնահա-  
 տուին այն ամէնքը՝ որոնք այդ գեղեցիկ  
 արհեստին շին հետեած: Մեր ո՞ր մեծա-  
 տունները խորհած են աջակցիլ արձա-  
 նագործի մը, զերասանի մը, երաժշտի մը,  
 պատկերահանի մը, գրագէտի մը մանա-  
 ւանդ. և օր մը երբ Համիտի զիմաց մեր  
 ինքնագոյութեան իրաւունքները կը պաշտ-  
 պանէինք, և կ'ուզէինք որ Եւրոպան ալ  
 աջակցի մեզի՝ ինչ յինարան ունէինք ։  
 Կ'ըսէինք Եւրոպայի՝ թէ հայ ազգը՝ հա-  
 րուստներ, քաջ կուտղներ, վաճառական-  
 ներ են ունեցած է և պէտք է ապրի ան:  
 Ո՛չ, Հայկական դատը. պաշտպանողները

գիտէին՝ թէ մեր նախնիք մեզի ազգային,  
 հին յունական, ասորական ևն մասնեա-  
 զրութիւնը թողած են, զորս մեզմէ՝ աւելի  
 գնահատել գիտէր Եւրոպացիք: Լուսավիթ  
 ազգ պէտք էինք կոչուիլ, պաշտպանուե-  
 լու իրաւունք ունենալու համար: Եւ Լու-  
 սավիտ ազգ կը կոչուինք այն ատեն՝ երբ  
 'գեղարուեստն ու գրականութիւնը կը զար-  
 ցացնենք. երբ նիւթապէս ու բարոյսպէս  
 կը վարձատրենք անոնց հետեողները:

Եւ ինչո՞ւ մեղադրենք միայն հարուստ-  
 ները:

Վարժարաններու մէջ՝ վայ այն տաղան-  
 դաւոր երիտասարդին՝ որուն՝ ընտիւթիւնը  
 սուած է զօրաւոր եռանդ մը և կարողու-  
 թիւնը Գեղարուեստի և Գրականութեան  
 հետեւելու. հոն ալ Բարերարները իրենց  
 համար նպատակ մը չեն թողած: Թուազի-  
 տութեան, բժշկութեան, ճարտարապետու-  
 թեան հետեղ մը պիտի կոխտէ ու անց-  
 նի այդ զժբարտ տաղանդը, բարերարին  
 թողած դրամէն պիտի նպաստուորութի և  
 վաղը հայ ազգը ճարտարապետ մը կամ  
 բժիշկ մը պիտի ունենայ՝ որ պիտի ապրի  
 իրեն համար միայն, կամ Եւրոպայ ճիտ-  
 լով. և անդին պիտի մաշի ու հալի այն՝  
 որ ուխտած էր ազգին նուիրուելու և ազ-  
 գին տալու իր մտքին ու ձեռքին անգին  
 արտադրութիւնները, (ինչպէս Շահին մը,  
 Վարուժան մը), Լոյսը վերջապէս:

Շիրվանզադէի Լուսոյ ծարսոյ՝ ամենուն  
 ականջին պէտք է կարդալ:

### Հ. Ն. ԱԿԻՆԵԱՆ

Չարարիս եպ. Գնունեսաց եւ իւր տաղերը

Ո՞ր ատեն որ հրապարակ էլէ՛ք Միջ-  
 նադարեան տաղասաց մը՝ միշտ պէտք է  
 հայ հասարակութիւնը պախարակող յա-  
 ռաջարան մը դնել: Այդ տաղերը որ ե-  
 րևան կու գան՝ զանձեր են հայ մտաու-  
 րական կեանքին, հոգ չէ թէ շատ նուա-

1. Տես Գեղունի 1909:

զաթիւ են զբաղանորէն արժէք ունեցող-  
ները :

Պր. Կոստանեանցը — պէտք է միշտ յիշել նախաձեռնարկողները — մի քանի պարակներ ընծայեց հասարակութեան. զնահատուեցան արդեօք իր ձեռնարկը, ո՛չ ապահովապէս, միայն քանի մը բանասէրներ կարեորութիւն տուին այդ պրակներուն : « Քուչակ » ը հրապարակ հանեց պ. Չօպանեան. խեղճ Քուչակ, արդեօք հայ ընթերցողներ ունեցան. ապահովապէս աւելի եւրոպացի ընթերցողներ և զնահատողներ ունեցաւ այդ մեծ բանաստեղծը քան հայ զբասէր ընթերցողներ : Եւ զուարճալին է որ պ. Չօպանեանը կը խորհէր « Քուչակ » ը համազգային դարձած բանաստեղծներու շարքին մէջ զնել տալ. պէտք չէ յուսահատիլ, կ'իրագործուի, եթէ մեր ազգը զուրս հանենք այդ համազգային շրջանակէն :

Տաղարաններու ճոխ հաւաքածոյքը Ս. Էջմիածին, Ս. Ղազար, Երուսաղէմ և Վիէննա կը գտնուին. այդ վանքերը պէտք է մէջտեղ հանեն անտիպ կտորները՝ առանց զեղեցիկն ու անհամը փնտտելու. մենք հինգ տարուան մէջ հազիւ կրցանք երկու հատոր հանել, Կոստանդին Երզնկացին և Առաքել Սիւնեցոյն Աղամզիրբը. և նոյնին քերթուածներու հրատարակութիւնը արդէն պատրաստ՝ չեմ գետեր ինչո՞ւ տակաւին խոստում կը մնայ :

Վիէննայի Միսիթ. Հարց մատենադարանի Տաղասացները մեր առջև դնել կը սկսի Մեծ. Հ. Ն. Ակինեան, և Ազգային Մատենադարանի շարքին Մթ շատրը՝ կը բովանդակէ Զաքարիա եպիսկոպոս Գևորգեանցի և իւր տաղերը, ինամոտ ուսուսանասիրութեամբ հրատարակուած՝ բաւարանով հանդերձ :

Մեծ. Հ. Ն. Ակինեանի այս հատորիկին մէջ կը հրատարակուին տասը տաղեր, յորոց առաջին վեցը միայն վաւերական կը համարի Զաքարիայի Գնուանաց եպիսկոպոսին : Հ. Ն. Ակինեան կը յիշէ դեռ ուրիշ տաղեր՝ որոնք Ս. Ղազարու մատենադարանին մէջ կը գտնուին .

և ցաւալին է որ առո՞նք հոն չեն երևար միջնադարեան բանաստեղծ մը իւր ամբողջ յայտնի գործերով հրապարակ հանելու համար : Այսպիսի հրատարակութիւններ հազիւ առաջին տպագրութեան կ'արժանանան. և ցանկալի է որ ըստ կարելոյն այդ անդրանիկ տպագրութիւնը կատարեալ ըլլայ տաղերու բովանդակութեամբ. բանասէրներ, ձեռագրատէրներ պէտք է հաղորդեն իրենց ունեցածները :

Մաղթելով որ Մեծ. Հ. Ակինեան շարունակէ իր գովելի ձեռնարկը, կը ջանանք յաջորդիւ այդ անտիպ տաղերը ընծայել Բագմավէպի ընթերցողաց :

Հ. Մ. ՊՈՏՈՒՐԵԱՆ



### ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

#### ՀԱՅԿԱԿԱՆ ՃԵՄԱՐԱՆ

- Հ. Բ. Սարգիսեան. — Երեք Քաղաք մտք. 97
- Գրոյցն . . . . . 97
- Հ. Վ. Հացուի. — Երբուքս հին Հայոց մէջ . 107

#### Գ Ր Ա Կ Ա Ն Ք

- Էրմէտը Հէլլո. — Մատնուած գաղտնիք մը (Քրքմ. Ա. վր. Սիրունեան) . . . . . 121
- Տոքո. Գոթմէլ Սպրամյի. — Վնեակոյ Ս. Ղազարու վանք (Քրքմ. Հ. Ն. Չ.) . . . . . 125
- Վիրգիլիոսի ձեռնարկներ — Ենէա Պիդէլորրոզ գրք. Քրք. Հ. Ա. Ղազիկեան . . . . . 127
- Արտն-Երկաթ. — Գարբնէրք . . . . . 131
- Արծիւն երգ . . . . . 132
- Քոնուս և Լոգիս . . . . . 133
- Ալբերդ Սիււօր. — Մահը (Քրքմ. Ա. Վ. Սիււոնեան . . . . . 133
- Տիգրան Զիթուի. — Գիւցազնուէն . . . . . 133
- Հ. Մ. Պոտուրեան. — Ուրացի . . . . . 134

#### Գ Ի Տ Ա Կ Ա Ն

- Ե. Յէսիեան. — Ոսիկանական վարժարաններ. 136

#### Գ Ր Ա Ե Օ Ս Ա Կ Ա Ն Ք

- Հ. Ղ. Տայեան. — Յիւթանիս, Պարտիզակ . 139
- Հ. Մ. Պոտուրեան — Եր Գրականութիւնը (Տեկին Ղուտեայ, Թէտիկ, Գ. Վարուսեան, Հ. Ն. Ակինեան) . . . . . 141